

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 47

22 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տ. Տ. Մելիսեդեկ արքեպիսկ. Մուրաշեանց. Ռ. Յ. ՊէրՊէրեան, — Երկու խօսք («Մա. սիս»ի նոր վիպակին քարգմանութեանը առթիւ) ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ, — Տարակուսանք (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՊԱՐՍԱՍԵԱՆ, — Կրօնք եւ բարոյական. ՀԱՐՄԱԿ, — Աղջկան մը օրագիրէն քաղուած. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ, — Բասմալալ Իվանովիչ (Վեպ) ԲԻԷՆԻ ԼՕԴԻ: քարգմ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ. — Խմբագրական զեկոյց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Խմբագրութեան տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար քառասուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանք կամ 5 ռուպլի: Թղթաստացական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առօրէ: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէ՛տ է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه غلطه (ماسيس) غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՍ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ դրամագումար ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ զաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոսվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆուլի-Տրամաթիք եւ այլն թափառները, Նաւե Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թափառները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառատուները:

Թրանսսայիանիթիք, Հալլը-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւններ:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է՝ որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կադմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը: Նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւ այլն:

Ընկերութեան դրամատունն է Քրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պրիսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ Թէ՛ հրդեհի եւ Թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Դ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances g n rales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պրիսոյ կողմի գործակալութիւնը:

Հապտ. — Պուլիս, Մահմուտ փաշա, Պէօյիւք Երլարզ Խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակ:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անքիւֆաի վաճառատուն մը, Պուլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ
ՀԱՍՏԱՏԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ս Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները: Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրութեանը ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միայն այն անձինք, որ Երաշխաւորութիւններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաթ Քաթրքը Օղլու

Մասնաձեւը՝ Ղալաթիա, Խնայէթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ



ՅՈՎԱՏԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ՝ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպոյնաւան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիւմ, քիւ 61

Զբոսանքան աբադան

Պալատեան ամէն օր աղաւթի ամէն տե-

սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիւերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալատեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու չինած աղաւթները: Տորեկները աղաւթ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ: քաշել տուողին կամքէն կարեալ է:

Աղբասներուն մըի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 շաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով ետ կ'առնուին իսկ ապառիկ գրանդներէն՝ 100ին 15 զեղչով:

ՀԱՋԱՐԱՆԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐ

Աս նոր գիտի Օրուան հետ համեմատելով խիստ քիչ կարևորութիւն մը ունին։



Հիշերու վրայ ասոր ուշա-
դրութիւն ընել պէտք է։

23

աւելանալ (սրբաճ) և արեան տկարութիւն և միւս արեան քէշութեան հետեւանքները, որոնք մարմնոյ տկարութեան նշաններն են, այս պիտի աղետները դարմանող և բժշկող դեղ մը կրնայ միայն ամեն կարեւոր և ամենաօքանչելի բան մը համարուիլ։ Ահաւասիկ հիմայ աշխարհիս մէջ կայ դեղ մը բոլոր այն ակտերու գէտ

SCOTT'S EMULSION

որ Առեգական միջնորդութիւն մէջ գտնուած փոշիները չորացնելուն պէս, նոյն հիւանդութիւնները կը բժշկէ։

ԸՍԳՕԹԻ ԲԱՎԱԳՐՈՒԹԻՈՒՆ

նաև մարդկային մարմինը շրջապատած բոլոր ակտերը հեռու կը վերնտէ։

ԸՍԳՕԹԻ ԲԱՎԱԳՐՈՒԹԻՈՒՆ

Արեան տկարութիւն ունեցող ազգց կեանքը կը փրկէ։

Բոլոր բեղաւորածները և բեղաւորածները կը ծախեն։

“AU COUSSIN D'OR”

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՍԿԵԹԵԼ ՈՒ ՄԵՏԱՔՍԱ.
ՀԻՒՍ ԲԱՆՈՒԱԾՔՆԵՐՈՒ ճոխ հաւաքածոյ
մը գտնել կարելի է Բերա, Լիւքսէմպուրկի
և Քլիւպի չէնքերուն միջեւ նոր բացուած
իողոցը, Օ ՔՈՒՍԵՆ ՏՕՌ անունով նորա-
հաստատ փողքիկ սիրուն վաճառատան մէջ։
Կնոջական արդուզարդի և ընտանեկան
նուէրներու յարմար, ինչպէս նաև սա-
լօններու զարդարման յատուկ ճաշակա-
ւոր գործուածքներու պէսպիսութիւն մը,
ամէնքն ալ ձեռքով բանուած բազմաթիւ
չելի գիներով։ Ապսպրանքներ կ'ընդունուին
նաև մեծաքանակ պատրաստութեանց համար։
Կ'արժէ ԵՐԹԱԼ և ՏԵՍՆԵԼ տեղական
արհեստագործութեան և մասնաւորապէս
հայ աղջիկներու ձեռարուեստի այս գեղեցիկ
արտադրութիւնները որոնք մեծապէս կը զը-
նահատուին Եւրոպացիներէն։

ԶՄԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱ-
ԴՈՒԼԵԱՆԻ Զինաստանէն, Հնդկաստանէն,
Ճապոնէն և Սէյլանէն ուղղակի բերել տուած
թաւմ, հոսաւեհ և առողջարար թէյերէն,
որոնք ձմրան եղանակին յարմարագոյն ըմ-
պելիննի։

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանիչին։

Կ. Պոլիս, Պահճէ Գալիւ,
Ճէլալ պէյ խան, թիւ 10։

Մասնաճիւղեր Թուրքիոյ
գլխաւոր քաղաքներուն մէջ,
նոյնպէս Եգիպտոս։



ԴԱՇՆԱԿԱՀԱՐ Երիտասարդ մը, որ Եւ-
րոպայի մէջ ուսումնասիրութիւններ կատա-
րած է, պատրաստակամութիւն ունի այցե-
լութեամբ դասեր տալ դպրոցներու եւ տու-
ներու մէջ։ Պէտք ունեցողները կրնան դիմել
Մասիսի խմբագրութեան։

ՄԱՍԻՍ

53^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 47

22 ՆՈՅԵՄԲԵՐ 1903

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Մեր վերնագիրը տեսնելով թերեւս ոմանք խորհին թէ շատ ուշ ենք մնացեր խօսելու անձի մը վրայ որ, ահա՛ չորս ամիսներէ ի վեր արդէն ծածկուած հողոյն տակ, անցելոյն այլ ևս կը վերաբերի։ Բայց մենք կ'ըսենք թէ կան անձեր որք կենդանութեան մէջ ըլլալով հանդերձ չեն արժանի խօսքի ու գրի առարկայ ըլլալու, մինչդեռ դարերէ հետէ ապրելէ դադարողներ ամէն օր կրնան նիւթ ընծայել մարդոց ուսումնասիրութեանցն ու խորհրդածութեանց, վասն զի ապրած են կեանք մը որ բեղմնաւոր եղած է անմոռանալի վաստակներով, և վասն զի իրենց ապրած կեանքէն միշտ կը բլխի կեանք մը մըտքի և հոգւոյ որ կարող է յար բարձր խոհեր և զգացումներ ներշնչել ողջերուն և իրենց յիշատակներովն ալ բարիք գործել՝ սիրտ և իմացականութիւն պարարելով։

Զմիւռնիոյ հանգուցեալ Առաջնորդը այսպիսեաց կարգէն է։ Մինչդեռ Յոնիական քաղաքին մէջ կատարուած մեռելական հանդէսներով ամէն պատիւ վերջացած կը համարուէր իր յիշատակին համար ու Ամեն. Ս. Պատրիարք Հօր առաջարկը՝ Կ. Պոլսոյ եկեղեցեաց մէջ յատուկ յիշատակութեան տըխրահանդէսի մը կատարման նկատմամբ՝ ընդունելութեան չէր արժանանար, ահա՛ ի կովկաս կը սկսէին անլերջ հոգեհանգիստներ, պատարագներ ու դամբանական բեմախօսութիւններ, պատուելու համար Եկեղեցւոյ փառաւոր զաւակին անմահ յիշատակը, ու, կարծես, ամէջնելու համար մեր դժուարահաճ Սրբազնութիւնները։ Վստահ ըլլանք. Ապագայն, ինչպէս միշտ, քան զմեզ արդարադատ պիտի լինի, և մինչ մենք կարծեցինք, մի քանի անձնական յուշերով ու կտակային տրամադրութեանց քննութեամբք, մեր վճիռը տուած ըլլալ, ապա-

գայ քննիչներ շատ ու շատ բան պիտի գտնեն խօսելու և գրուածելու անոր մասին, ճշդելով տեղը—որ շատ բարձր պէտք է լինի—զոր իրաւունք ունի գրաւելու ժողովրդեան յիշողութեան մէջ իբրեւ Հայ եկեղեցական։

Ի հարկէ, սովորական դէմք մը չէր այն որ երեւցաւ հայ եկեղեցականութեան հորիզոնին վրայ Մելքիսեդեկ Մուրատեանց անունին տակ և անհետացաւ մահաստուեր ամպոց կոյտին ետեւ։ Գննադատներ ունինք որք գովեստի մէջ նուաստանալ կը կարծեն, ու կը խորհին թէ ա'յնքան մեծ է քննադատին փառքը որքան ի ստոր կ'իջեցնէ իւր քննութեան առարկան։ Այսպէս ընողներ եղան Մելքիսեդեկ Մուրատեանցի մասին։ Խոնարհ ու պարկեշտ ոգւոյն մէջ հպարտութեան ամբարտախ մը տեսան, և կեղակարծ կամ ստոյգ կտակի մը ընտանեւորական տրամադրութեանց մէջ եկեղեցւոյ ու տոհմի շահերուն անտարբեր օտական ոգի մը նշմարեցին։ Եւ կան որ հաճոյք մը կ'զգան արժանիքը ուրացուած տեսնելով, իբր այն թէ կարկառուն դէմքեր հարթէին ուրիշները, և կամ թէ ընդհանուր տափակութիւն մը հարկաւոր ըլլար ինքնասէր եսերու արտակարկառման համար։

Յայտնապէս անիրաւեցան ոմանք ամենապայծառ չքնաղ արժանաւորութեան մը հանդէպ։ Անպատճառ Ազգին գրամական մեծ գումար մը կտակելու պարտականութիւնը՝ իբր պայման մեծ եկեղեցական մ'ըլլալու, ազդու խօսքերով մերժեցին արդէն ուրիշներ։ Մերժելի է նաեւ այն մի ուրիշ պայմանն ալ որու համեմատ անպատճառ հարկ ըլլայ եկեղեցականին տեղէ տեղ, դաւառէ դաւառ թափառական ընթացած ըլլալ՝ արժանի ըլ-

լալու համար Ազգին երախտագիտութեան : Ազգին ու եկեղեցւոյն ծառայելու այլազան եղանակներ կան, որք կը փոփոխին անձնական կարողութեանց ու տրամադրութեանց համեմատ : Մին կը ծառայէ մշտաշարժ գործունէութեամբ, մի ուրիշն աթոռանիստ ետեղակալ աշխատութեամբ, երբ, զոր օրինակ, կը հեղինակէ գրուածներ որք պիտի կրնան յաւէտ ներգործել սրտերու և մտքերու վրայ : Ինչո՞ւ պահաջել որ ամէնքն նոյն տարադէպ ունեցած ըլլան օգտաւէտ գործունէութեան, և ինչո՞ւ չկարենանք կամ չուզենք իւրաքանչիւր անհատի գործն ու արժանիքը դատել ըստ ինքեան, իրեն յատուկ ձեւին մէջ :

Չքնաղ արժանիք մ'է ինքնին, երբ մէկը գիւղի մը մէջ աշխարհ կուգայ, քաղաքի մը Ուսումնարանին մէջ նշանակելի փայլուն աշակերտ կը դառնայ, իր վրայ կը հրաւիրէ Աշտարակեցւոյ նման մեծանուն կաթողիկոսի մը համակրանքն, տակաւին յոյժ անտիական՝ կը հրաւիրուի անկէ յատենի եկեղեցւոյ քարոզելու անոր ներկայութեան, ուսուցիչ և տեսուչ կը դառնայ այն վարժարանին մէջ ուր ուսաւ իբրեւ պանդուխտ ուսանող, յետոյ իր միջավայրը կը փոխէ հանրօգուտ գործունէութեան յարմարագոյն դաշտի մ'ի խնդիր, կը վարէ Ս. Երուսաղեմայ Ժառանգաւորաց դպրոցը որ իր ճգանց ու քրտնաշան տքնութեանց չնորհիւ կ'արտագրէ իրեն ամէնէն շատ պատիւ բերող պտուղներէն մի քանին, կը մատենագրէ գրական—կրօնական ընտիր երկեր, կարեւոր գաւառի առաջնորդ ընտրուած՝ տասնեակ տարիներով կը վարէ անոր եկեղեցական ու կրթական գործերը, իր մզիչ աղբեցութեամբ նորոգել, չինել, հիմնել տալով կրթական ու բարեգործական հաստատութիւններ, և վերջապէս, լոկ իր եղական արժանիքին համար, եկեղեցւոյ ամենաբարձր աթոռին կը կոչուի Ազգին միահամուռ քուէներով, և թէև չի վարեր այդ պաշտօնը իր կամքէն անկախ պատճառներով, բայց մինչև վերջին վայրկեանը իր կեանքին կը շնչէ, կը խորհի, կը խօսի, կը գրէ իր եկեղեցւոյն և Հօտին օգտին համար, եւ հուսկ ուրեմն

կ'արժանանայ թաղուիլ եկեղեցւոյ գրկին մէջ անվիճելի իրաւունքով : Եւ ահա՛ կեանք մը որուն պատմութիւնը միայն իր գովեստն է, իբրեւ գեղահիւս վսեմ քերթուած մը, համակ ծառայութիւններով ու պատիւներով հիւսուած կեանք մը :

Յաճախ ո՞րքան դժուարին է ճանչնալ մարդուն հոգին : Մօտէն գիտակ այդ հոգւոյն, կրնամ վկայութիւն տալ թէ ո՞րքան սիրով էր պարզութեան, զանխուռ ու անսեւ թեւերթ կեանքի, հեռու հպարտութենէ ու անախառ պերճասիրութենէ. և սակայն այն դառնութիւնը զոր ունեցաւ ծանօթ կաթողիկոսական խնդրոց մէջ՝ վերագրուեցաւ կաթողիկոսական փառքէ գրկման անձնասիրական վիրաւորման, սրտաբեկութեան : Ահ, պէտք էր ճանչնալ անոր հոգին ու տեսնել թէ, իբրեւ Հայ եկեղեցականի հոգի, ո՞րքան խորունկ էր իր վիշտը իրաւադիրք և անշքացած եկեղեցւոյն հանդէպ : Եւ, տխրելու, իր հոգւոյն մէջ դառնանալու իրաւունքն ալ զլացուած էր անոր, որ «քէն ընել» տղայական բառերով կ'որակենք իր մեծ տրամութիւնը : Այդ տխրութիւնը ունենալու և գրչով ալ արտայայտելու համար որքա՛ն արիւթթիւն պէտք էր ունենալ հոգւոյն մէջ : Ու Մելքիսեդեկ արիւթթեան համար ծնած մարդ էր : Կակայի կաղնի ու սիրտն ունէր նա իր մէջ : Անձնական գրկումի մը ազդած զայրո՞յթն էր իր ցաւը : Ինչ փոքրիկ չափով կը յաւակնիք չափել մեծ մարդն ու իր մեծ զգացումները : Չարժեք խօսիլ այն ճղճիմութիւններուն վերայ որով կարծեցին խժքժել իր բարոյական տրամադրութիւնները իր կտակին առթիւ : Բովանդակ կեանքին մէջ առանց հաշուելու տուող մարդու մը, որ և բազմաթիւ ուսանողներ պաշտպանած էր իր ծախքով, անձուկ շահասիրութիւններ վերագրեցին, ինչպէս իր մարմնոյն տկարութիւններէն յառաջացած հանգստի բնական ձգտումը անձնդիւր հեշտախնդրութիւն մեկնուեցաւ : Ահ, մեր բարեհաճ ներողամտութեան արժանանալու համար կատարեալ խեղճ մը պարտէր ըլլալ իրացեալ խեղճ մը, և մե՛նք ենք որ կը պահանջենք զայդ, աննկատ մեր թերութեանց, մեր այնքանի փոքրութեանց :

Ճանչցանք զինքը՝ մի քանի բարեկամներ, ընտանեկան ու դպրոցական շրջանակի մէջ։ Յայտնի էր որ ընտանեկան կեանքը շատ կը յարգէր ու կը սիրէր. սիրելու համար ստեղծուած սիրտ մ'ունէր, սարկեչտ ու լուրջ սիրով սիրելու, մաքուր և սուրբ սիրով սիրելու, և եթէ ստոյգ է մայրապետացեալ կոյսին պատմութիւնը որ օր մ'անոր հարսնանալու երազն ունեցաւ ու մերժուեցաւ անկէ, վասն զի նախամեծար ընտրեց նա նուիրուիլ իր Եկեղեցւոյ սիրոյն, — այս պարագայ, զոհին մեծութեամբն զոր ըրած է, ցոյց կուտայ թէ ո՛րչափ բուռն եղած է Գարեգին Մուրատեանցի սրտին մէջ Հաւատոյ ու Եկեղեցւոյ սէրը մինչև յաղթել ընտանեկան, ամուսնական կեանքի սիրոյն որ ա՛յնքան դժուար էր իւր մէջ։ Նոյնպէս էր նաև ուսուցանելու տենչը իրեն համար։ Զերմեռանդ ուսուցիչ եղած էր իր ծննդավայրին մէջ հայ լեզուի։ Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանը անմոռաց թուական մ'ունեցաւ իրմով։ յետոյ ի Պոլիս ալ կրօնագիտութիւն դասախօսեց նոյն վառ սրտով։

«Իմ կենաց տարիներուս, կը գրէր ինձ Պ. Վարժարանի յոբելեանին առթիւ առ իս ուղղած մի հոգեկից թղթի մէջ, ամենամեծ մասը հոլովուած են ուսանողական և ուսուցչական ասպարիզին մէջ, ո՛չ միայն յաշխարհիկ վիճակի, այլ և ի վարդապետութեան, յառաջնորդութեան, յեպիսկոպոսութեան և նոյն իսկ յետ կաթողիկոսական ընտրութեան։ Այսօր իսկ անպատում ցնծութեամբ կը հրճուիմ, երբ կը տեսնեմ թէ բաղմաթիւ աշակերտներէս Տ. Գիւտ քահանայ Աղանեան ի Կովկաս կը տօնէ իր զրազխտական յոբելեան, Պ. Յարութիւն Արէլեանց, Զուրիկի Համալսարանին ուսուցչական, աննման երախտագիտութեամբ կը յայտարարէ աշխիւ բժիշկ Թիրեաքեանին թէ աշակերտած է ինձ ի հայագիտութեան, և սանուռքս ժառանգաւորաց վարժարանին Ս. Երուսաղէմի, արդէն ծանօթ են ի Թուրքիա ուսուցչական, քահանայական և նոյն իսկ եպիսկոպոսական պաշտօններով»։ Յիշելով մեր շրջանակին մէջ ընտանեկան և դպրոցական հանդէսներն, ո-

րոց ներկայ ըլլալ ա՛յնքան յուզիչ էր իրեն համար, կը գրէ այլուր, նոյն թղթին մէջ, գերդպօն մարդու խանդավառանքով. «Սոյն իսկ վայրկեանին, գիրս գրելու մտախռնութեանս մէջ, կը զարթնուն անցելոյն յիշատակներն, ձեր տօնադարձներու և դպրոցական հանդէսներու պատկերացումներով։ Սիրտս կը խռովի, միտքս կը տատամսի, աչքերս կը տամկանան և կը գոչեմ արտասուածոր. — Ա՛խ, քաղցր յիշատակներ, ա՛խ անմոռանալի օրեր, զորս նկարագրելու համար՝ բաւական չեն արհեստական ներկն կամ մեկանն, այլ պէտք է անհրաժեշտ երկնքի կապուտակին մէջ թաթաւել վրձինն՝ պատկերելու համար ինչ որ երկնային է ու յաւիտենական»։

Այս շեշտերը բանաստեղծ հոգիի մը շեշտերն են, որ բուռն կ'զգայ գեղեցիկը ու մանաւանդ բարոյական գեղեցիկութիւնը, և Մեկքիսեդեկ Սրբազան էր արդարև բանաստեղծ, երգիչ։ Իր խաչին երգը ծանօթ է ամենուն. բայց շատ առիթներու մէջ կ'առնէր քնարը ձեռքը ու գողտրիկ տաղեր կը հիւսէր, մանաւանդ ընտանեկան կեանքի պարագայներ երգելու համար, մատաղ մանուկին գեղն ու չնորհը, անմեղունակ հոգիին քունը որբանին մէջ, մաղթանք անոր ապագային համար, ևն։

Բանաստեղծ ու պերճախօս, ահա՛ իր հրուռ ոգւոյն արտայայտութեան երկու գլխաւոր ձեւերը։ Իր դասագրքերուն մէջ ալ, իր պարզ նամակներուն մէջ ալ կ'երգէ կամ կ'որոտայ։ Ծայրէ ծայր իր Հայ եկեղեցւոյ պատմութիւնը ջատագովութեան խանդավառ ճառ մ'է ի պատիւ Հայ Եկեղեցւոյն։ Հովուական Աստուածաբանութիւնը, թո՛ղ ըլլայ նմանողութեամբ գրուած մը, երգն է դմայման այն բարերար, խաղաղիկ ու խոհալից կեանքին զոր կ'երեւակայէ ճմարիտ քահանային համար։ Իր քարոզները ժայթքում էին հաւատոյ և սիրոյ խանդի քան հանդարտ ասպոցուցումներ կրօնական հաւատալեաց ու բարոյական պատուէրներու։ Այսուհանդերձ կուռ տրամաբանութիւնն ալ իր մտքին կարողութիւններէն մըն էր. միայն թէ բոցե-

ռանդ. ձեւի մը տակ ի յայտ կուգար իր խօսքին ու գրութեան մէջ: Բոլոր աշխարհ զմայլեցաւ «առ Պապն պատասխանեոյն» վրայ, վասն զի լի էր քրիստոնէական օծութեամբ ու սիրոյ եւ համերաշխութեան ոգով. սրտին լեզուն էր մանաւաճդ որ կը խօսէր անոր մէջ, որուն առջեւ կրօնային գերիշխանութեան յաւակնոտ վաստաբանութիւնք շատ վարը կը մնային: Անգղիոյ եւ Ամերիկայի Մամուլները իրրեւ սիրոյ ճշմարիտ Առաքելի մը Թուղթը հրատարակեցին անոր Թարգմանութիւնը:

Առաքելի մը սէրն ու հուրը ունէր արդարեւ, ու յիրաւի ճշմարիտ Ժառանգ մ'էր Առաքելոց ոգւոյն: «Առաքելական եկեղեցի», կարծեմ թէ ասոր մէջ կը տեսնէր Հայ Եկեղեցւոյն գերազանց տիտղոսը, ու «առաքելականութիւնը» հոմանիշ կը համարէր պարզութեան, անկեղծութեան, եղբայրսիրութեան: Ահա՛ ինչու համար կը դայրանար իր հոգին բոլոր անոնց դէմ որք որոմ կը սերմանէին, որք խտրելու պատճառներ կը փնտռէին, որք կրօնային գերիշխանութեան իրաւունքներ կ'որոնէին, ամէնուն ծառայելու պարտքը անտեսելով: Կիլիկիոյ եպիսկոպոսները Հայ Եկեղեցւոյ Հօտին ամբողջութեան մէջ պաշտօնավարելու արտօնեալ չը տեսնելը մեծ վիշտ կ'առնէր իր սրտին: Իր ներող ընդունիչը առիթ ալ եղաւ յաջա կարճամտաց՝ զինքն իրր օտարահալ ամբաստանելու: Երբ Քրիստոնէական կրօնին հիմնական նոյնութիւնը յարգելի կ'ընէր իր առջեւ ամէն Քրիստոնեայ Եկեղեցիները, որչափ առելի բոլոր կրօնական Հայ Հասարակութիւններն համակրելի պէտք էին ըլլալ իրեն, առանց որ այդ համակրութիւնը հակառակէր Հայ Եկեղեցւոյն զաւակներն իրենց Մօր գրկին մէջ անանջատ տեսնելու իղձին: Չափազանց ճշմարիտ քրիստոնեայ մ'էր Ան այսպիսի իղձ մը կրօնային աններողութեան ու հեռի պատուակ նկատելու համար: Օրհնեալ ըլլայ իւր յիշատակը:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՎՐԻՊԱԿ. — Մասիսի վերջին թուով հրատարակուած Աւետարան մի (Թարգմ. Ռ. Յ. Պ.) քերթուածին մէջ, 14րդ տող, տանի պիտի կարդացուի տանի:

ՏԱՐԱԿՈՒՍԱՆՔ

Խոսովանք՝ որ կը սիրես զիս հիմայ, Թե եեզ քանցող հանելուկը ե'ս եմ լոկ. Թե երգերուս դրօշմը միտս կը մնայ Իտեական սաւառնումիդ մէջ անհոգ:

Խոսովանք՝ քե կը յիշես զիս անքան, Որ երգներդ բոլորն ալ զի'ս կ'օրօրեն. Ըսե՛ք որ խօյ պաշտօններուդ առաւելան, Ե'ս եմ միայն՝ ես որ կ'երգեմ հեռուէն:

Շուով քսե՛, ինչ որ կըզգաս եւ ունիս, Հեզ հոգիս համար որ միտս կը հեծե, Ըսե՛ք քե լուռ նաւերումը մարմինիս, Քեզի տարած քեւեր կուտայ բեհեզե:

Որպեսզի գէթ սերես նուազ տառապիմ, Ակահչս ի վար քսե՛ որ զիս կը պաշեսս: Տարակոյսիմ զքօսանքն եմ գարձած սիմ, Ինչ որ քսես, պիտի հաւտամ վերջապէս:

Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Բերա

ԵՐԿՈՒԽՕՍՔ

(ՄԵՐ ՆՈՐ ՎԵՊԱԿԻՆ ՅԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆԸ ԱՌԻԹՈՎ)

Իսկապէս թերթին մը չէ այս անգամ որ կը Թարգմանենք, կամ գէթ ինչ որ կը հասկընան հիմակ ընդհանրապէս, շատ հասարակցած ու իր նպատակէն շեղած այդ բառով: Եթէ ընկալուած բանաձեւով՝ «ընթերցողները հե ի հե անձկութեան մէջ» պահել, կամ աւելի անսքող ու թափանցող բացատրութիւնով՝ միամիտ ընթերցողները շահագործելու խանութպանական միջոց մը կը հասկցուի անով, չէ՛, մերը ան չէ:

Լրագրութիւնը ինծի համար, ու շատերու համար ալ, այն հաղուագիւտ ասպարէզներէն մէկն է՝ ուր մրցումը գերազանցապէս ու *exclusivement* աղնիւ պէտք է ըլլայ: Ինչու որ հասարակութեան միտքին, ճաշակին, զարգացումին կապուած է ան և հակառակ ընթացք մը շատ գեանաքարչ արդիւնք մը առաջ պիտի բերէր: Մեր մէջ, լրագրական հրապարակին վրայ մղուած պայքարին կամ մրցումին ինչ կարգի ըլլալը խնդրական է շատ: Բայց ինչ որ ապահով է՝ սա է թէ, ատկէ առաջին փաստողը թերթօն-վէպը եղած է սկիզբէն ի վեր, վաճառորդի նրբախոյզ հաշիւներով պղծուած ըլլալով:

Չեմ հասկնար: Երբեմն օրագրողները յաւակնութիւնը կունենան մեծաբանելու թէ, իրենք կոչուած են առաջնորդելու հասարակութեան միտքը ու հոգին, իրենց առաջնորդողներով, գրականներով, գեղարուեստականներով, տնտեսականներով, վէպերով և դեռ չեմ գիտեր ինչերով, Հասարակութեան բարոյական ու մտաւորական օգուտին համար զոհողութիւններ ընողի, անհաւախ ընդդիւրի հովեր կ'առնեն: Բայց երբ, առաջին անգամ որ մէկը մատը վեր կը վերցնէ դիտողութիւն մը ընելու, յոռի ու փաստակար ուղղութիւն մը նշաւակելու կամ լաւ ճամբայ մը ցոյց տալու համար, անմիջապէս իրար կ'անցնին, նիւթական նկատումներ առաջ կը քննեն, ըսելով որ վերջապէս անհատական ձեռնարկ մըն է սա, իրենք պարտաւոր են խնդրանքին միայն մատուցումը ընելու: մեծամասնութիւնը, *gros public*ը գոհացնելու, որ եթէ միշտ վարնոց ասրանք կուզէ՝ յանցանքը իրենցը չէ, եւայլն: Երանի՜ անոնց որոնք իրենց անձնական շահը ու ժողովուրդին բարոյական ու մտաւորական օգուտը գիտեն հաշտեցնել իրարու հետ:

Այս մասին չեմ ուղեր աւելի երկարել, որովհետեւ նիւթը բեղուն է, յօդուածիս շրջանակը նեղ և կրնայ մեզի հեռունները տանիլ: Այսչափն ալ հասկցնելու համար միայն թէ ինչու կը խրաչինք ընդհանրապէս «թերթօն» բառէն, որ մեր թարգմանած վէպերուն մակդիր ըլլալու յարմարութիւն ունենալէ շատ հեռու է:

Անցածները, երբ Լիլիէն *Vorrhu* նոր սկսած էր հրատարակուիլ, ծանօթ անձ մը հանդիպելով ինծի, կը խնդրէ ինչ որ քանի մը բառով բացատրեմ իրեն թէ ի՞նչ պիտի ըլլայ և ինտո՛ր պիտի վերջանայ վէպը: Ձի կրցայ մերժել, բայց իրեն դոհացում տալէս ետքը ուղեցի պատճառը հասկնալ իր կանխակալ հետամտութեան:

— Բայց, որպէսզի պէտք չունենամ ծայրէ ի ծայր զայն կարդալու, պատասխանեց:

Ահա թէ ո՛ւր կը տանի, հետաքրքրաշարժ դէպքերով, հե ի հե անձկութեան մէջ պահելու ունակութեան չափազանցութիւնը: Ալ գրուածքին ամէն մէկ տողին անուշութիւնը, նկարագրութեան գեղեցկութիւնը, արուեստագէտի վարպետ դարձուածքները, հոգին վերջապէս դործին, կարեւորութիւն չունին, անակնկալ դէպքերը, տարօրինակ եղելութիւնները, անհաւատալի իրադարձութիւններու հիւսքը միայն և ոչինչ աւելի:

— Ըսել է Լիլիէնը պիտի սիրէ, փոխադարձաբար պիտի սիրուի, կարգուի ու մեռնի՛... Վա՛խ, վա՛խ, վա՛խ...

Եղա՛ւ լմնցաւ: Հիմա կը մտածեմ թէ ինչո՛ւ համար, այս նոր պահանջին հանդէպ նոր սեռ մը չի ստեղծուիր և չորս հինգ տողերով վէպերու բաղմամբիւ ամփոփոյթներ չեն տրուիր ամէն օր, զնաց եկաւ, զարկաւ, կոտորեց թափեց, ծնաւ մեռաւ... Թերեւս քանի մը թերթ աւելի ծախուէր:

Անցած օր ալ հանդիպեցայ ուրիշ մէկու մը, որ առտուն կանուխ արթնցած, երեսը չի լուացած, նախաճաշ չըրած, առաջին շոգենաւն ալ փախցնելու վտանգին ենթակայ, անպարանքով, ոտքի վրայ, հետաքրքրաւէտ, արշալոյսեան թերթի մը թերթօնը լափելու վրայ էր, առանց խորհելու որ, երէկ ուսն պէս այսօր ալ իր հետաքրքրութիւնը պիտի մկրատուէր մէկէն ի մէկ, միշտ անյադ, սպասելով մինչև վաղը, մինչև միւս օր, ամէն օր: մինչեւ իր կամ թերթօնին կեանքին վերջը: Ի՞նչ անուշ հեւք միտքի անձկութեան...

Աս կարգի մարդիկն են որոնք, ա՛լ ծայրայեղութեան մղուելով չեն կրցած դիմա-

նալ և վաղած են դնել բնագիր հասորը վէպին և կարգացած են կամ կարգացնել տուած, միմիայն անմիջական կերպով հասկընալու, իմանալու համար վեր ի վերոյ թէ այս ինչ մարքիզուհին կամ այն ինչ դերասանը ի՞նչ վերջաւորութիւն ունեցեր են հոն: Արդարեւ, լաւագոյն եղանակն է ադ, վերջ տալու միտքի հեւ ի հեւ անձկութեան մը տխուր ու ակտուոր վիճակին: Բայց ատոր ալ փոխարէն, խորամանկ խմբագիրներ ուրիշ միջոցներ խորհած են և իրենց վէպին անունը փոխելով երկու առաւելութիւն ձեռք բերել կարծած են. նախ, վէպը՝ բնագիրէն ամբողջութիւնով ու մէկ անգամէն կարգաւ ուղղը ընթերցողին միտքը *dérouter* ընել, յետոյ շողշողուն անուններով հետաքրքրութիւն գրգռել:

Ան տեսակ ընթերցողներու համար չէ մեր թարգմանութիւնը: Մանաւանդ Մասիօի մէջ, որ գրական շարաթաթերթ մըն է և աւելի ընտրեալ ու զարգացած դասակարգի մը համար կը հրատարակուի, միտքի համայնք պատճառող բովանդակութիւն մը շատ աւելի քաջայարմար պիտի ըլլար քան թէ ցընորական ու անկապ դէպքերով հիւսուած թերթօններ:

Ուղեւորական յօդուածներու հրատարակութեանը առիթով եղան մարդիկ ալ, որոնք կը մաղթեմ ու կը հաւատամ որ մեծամասնութիւն չեն կաղմեր, ուղղակի կամ անուղղակի միջոցներով զգացուցին ինծի որ, քիչ մը շատ անձնական ու բանաստեղծական էին անոնք և պէտք է ի աւելի զբաղիլ անտեսագիտական հարցերով և աշխարհագրական աւելի լայն ծանօթութիւններով օժտել զանոնք: Ատենով առեւտրական պաշտօնեայ մը եղած ըլլալս, թերեւս առիթ տուած ըլլայ ո՞մանց որ անտեսական իւրերով իմորուած յօդուածներ ակնկալեն ինչ, և փոխանակ ծախքեր ընելով յատուկ պաշտօնեաներ խրկելու օտար երկիրներ, թերթի մը մէջէն աժանոց ու օգտակար տեղեկութիւններ քաղելու ծարաւի ըլլան: Ադ կը հասկնամ: Բայց ինչ որ անըմբռնելի կը մնայ ինծի, սա է որ, ինչ յարաբերութիւն կրնայ գտնուիլ

իմ և աշխարհագրութեան դասատուի մը կամ երկրախոյզներու ընկերութեան մը թղթակից. — անդամին միջև:

Հեռո՛ւ ինչ, բաղդատութեան եզր ըլլալ, *Pêcheur d'Islande*ի զգայուն ու կախարդիչ հեղինակին հետ, բայց վերոյիշեալ տեսակէտով, շատ կը վախճամ որ Բիէռ Լօթիի պէս գերազանց զրագէտ մը, իր բոլոր տարաշխարհիկ ու հրաշակերտ վէպերովը շատ անժողովրդական պիտի ըլլար մեր մէջ. ինչու որ իր հազարաւոր էջերուն մէջ, փոխանակ հեռաւոր երկիրներու երկրագործական կամ ճարտարական արտադրութիւնները ու փոխանակութիւնները մանրամասնելու, իր յաւիտենական սրտատրոփներովը ասեղնանըլարուած, իր խմորը կաղմող թոյլ մելաւազածութիւնովը օժուած, անցեալին ցաւովը ու անգրագոյնին վախովը համակուած, ու դրեթէ իրարու նմանող, անիոփոխ ու առանց տրամաթիք վախճանի սիրային պարզ, անձնական ու միօրինակ պատմութիւններով հիւսած է զանոնք:

Դեռ շատ *catégorie*ները կան ընթերցողներու որոնց համար չեն, ինչպէս ըսի, մեր թարգմանած վէպերը: Այդ վէպերուն համար ընդունուած իմաստով «թերթօն» բառն ալ, կը կրկնեմ, ամէնէն քիչ յարմարն է:

Եւ սակայն ճշդիւ վէպ մըն ալ չէ մեր այս անգամ թարգմանածը որ միշտ Մասիօի, շարաթաթական անայլալ չորս էջով հազիւ վեց անգամ պիտի տեւէ, այսինքն ճիշդ ու ճիշդ մինչեւ տարեշրջանին վերջը կ'աւարտի բաւեղէպ կերպով:

Բասուալա Իվանովիչ տեսակ մը վիպակ է, ընդելուզուած ուղեւորական նոթերու ծաղիկներով ու բնութեան տեսարաններու շքեղ նկարագրութիւններով, ճամբորդութիւններու մեծ սիրահար ու տարաշխարհիկ վէպերու հոյակապ վարպետին՝ Բիէռ Լօթիին կողմէ գրուած: Հրաշակերտ մը չէ ան անչուշա, բայց այնչափ պարզ ու գոգարիկ, այնչափ մելամաղձոտ ու նկարագրեղ է որ տարակոյս չունինք թէ Մասիօի բոլոր ընթերցողները հաւատարապէս դո՛ւ պիտի մնան զայն կարգաւորով:

Սիրային քաղցրիկ ու փափկանուշ հով-
ուերգութիւն մը պատշուակը միայն կը կազ-
մէ վիպակին և ոչ թէ անոր mouvementը,
և ամբողջութիւնը տեսակ մը օրագիր է,
տեղական ու անձնական տպաւորութիւննե-
րով համեմուած, ինչպէս իր մեծ վէպերը,
գլուխ-գործոցները. Մասամ Բրիգանքիմ,
Լօթի ամուսնութիւնը, Ռամուլէօ և այլն:

Լօթի, Արեւելքի սիրահարը ու երգիչը,
օրուան գրական այժմէութիւնն է՝ մայրաքա-
ղաքիս ֆրանսական դեսպանատան պահակա-
նաւին՝ իր իսկ խնդրանքովը՝ հրամանատար
կարգուելէն ի վեր: Իր վէպերէն տակաւին
թարգմանօրէն հատ մը չի հրատարակուած,
լայնագիծ ու ճշգրիտ ուսումնասիրութիւններ
եղած են արդէն շատոնց մեր մէջ և իր ա-
նունը՝ խիստ շատ անգամներ կրկնուած,
ծանօթ է ամէնուս: Ատոր համար զանց կ'առ-
նեմ աւելի երկարօրէն խօսիլ իր անձին ու
գործին վրայ, իր մէկ վիպակը թարգմանե-
լու առիթով:

Բայց ինչ որ յօժարափոյթ պիտի ուզէի
մատնանշել, այն ալ ճակատագրային թերեւ
այն զուգադիպութիւնն է, որով ուղեւորա-
կան նօթերուս շարքերուն հրատարակու-
թեանը հետ ու անկէց ետքը երկու ուղեւո-
րական վէպեր կը վիճակի ինձ թարգմանել,
աշխարհահռչակ երկու դրօշներու գործերէն,
որոնք հաւասար անհունութիւնով պաշտօղ-
ներ եղած են տար աշխարհներու մէջ նոր
տպաւորութիւններ քաղելու և որոնց տմոյն
ու հիացիկ մէկ ցոլքէն տարբեր բան մը չէ
ապահովաբար, Եւրոպայի շրջանէն ետքը՝
Աշխարհի շրջանին պատրաստուող՝ ճամբոր-
դութեան խենդ սիրահար իրենց թարգմա-
նողը:

ԶիՅԹԷ-ՍԱՐԱՅԻՆ .

ԿՐՈՆԻ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

«ԱԻԵՏԱԲԵՐ»ԻՆ

Մասիսի հրաւերին վրայ՝ աւելորդ չեմ
նկատեր հաճառօտիւ պատասխանել՝ Կրօն եւ
Բարոյական յօդուածիս մասին՝ Աւեսաբերին
ըրած դիտողութիւններուն:

«Հայ Թերթեր»ու ծաղկաքաղը շատ հա-
րեւանցի կարդացած է մեր յօդուածը, որուն
սիրող գաղափարն էր թէ բարոյականը կը-
րօնքէն անկախ չէ, և թէ բարոյականի արդի
ճոխ, ծաղկեալ եւ աղնուագոյն ըմբռնումը
քրիստոնէութեան եղական արդիւնքն է:
Աստուած ու բարին՝ սիրոյ ջերմութեամբ մը՝
քրիստոնէական պայծառ դիտակցութեան
մէջ այնքան խորապէս միացած՝ չաղա-
պատուած են, որ բարձր բարեպաշտութիւնը
հոն համարժէք է իտէալ բարոյականին: Գի-
տակցութեան այդ բարձրութիւնէն երբ յե-
տադարձիկ ակնարկ մը կ'երկարաձգենք
անցեալին կրօնական բաղմազան երե-
ւոյթներուն վրայ, թանձրամիտ փետիշա-
պաշտութիւնէն մինչեւ եղիպտական քուրմ
փիլիսոփաներու միապաշտութիւնը (mo-
nolatrie), մինչեւ Ռիկ-Վետաներու սրբա-
զան բանաստեղծութիւնը եւ նրբամիտ
Հելլէններու գեղեցկաճիւս գիցաբանու-
թիւնը, գրեթէ չենք գտներ կրօնական գե-
տին մը, ուր բարոյականը իր աւետարանա-
կան մաքրութեամբ փթթած եւ հասունցած
ըլլայ:

Բայց թէ նախաքրիստոնէական կրօնական
դրութիւններու մէջ ալ՝ կրօնքն ու բարո-
յականը անխտիր, ամէն երկինքի տակ, ամէն
ժամանակ, ամէն ժողովուրդի ծոցը, իրենց
բոլոր եղանակաւորումներուն մէջ, և իրենց
բոլոր աստիճաններուն վրայ, երկուորեակ
զոյգի մը պէս, թեւ թեւի, զուգահեռաբար
քալած և իրարու ազդած են, այդ կարծիքը
պատմական հիմ մը չունի: Հետեւաբար՝ Ա-
ւեսաբերի այն բանաձեւը թէ «ամէն կրօնքի
մէջ բարոյական և կրօնք զուգընթաց են և
իրարու կ'ազդեն» կը կորսնցնէ իր նշանա-
կութիւնը:

Մտքին մէկ վտանգաւոր ձեւն է անցեալը
ներկային շունչով ոգեւորել, եւ վաղեմի
կեանքը ներկայի տեսակէտով դիտել, հոն
տեսնելով ոչ թէ եղած իրականութիւնը, այլ
ինչ որ պարտէր ըլլալ այն: Աւեսաբերի
քննադատն ալ կը թռի թէ այդ մեկնակէ-
տէն ճամբայ կ'ելնէ: Մինչ անկողմնակալ
հայեացք մը կրօնից պատմութեան վրայ, —

եթէ կը սիրէ թղթատել զայն եւ արժեցնել կրօնի փիլիսոփայութեան տեսակէտով, — պիտի համոզէր զինքը թէ՛ սխալ է երբ կ'ըսենք որ կրօնքն ու բարոյականը՝ ըստ ամենայնի՝ ներդաշնակութեան մը մէջ չեն գտնուիր բնապաշտական կրօնքներու մէջ:

Վասն զի, հին հաւատալիքները ընդհանրապէս կախարդութենէ եւ նուիրական բանաձեւերէ բաղկացած են, որոնք կա՛մ ոգիներու քինախմբութեան դէմ պիտի պաշտպանէին գերդաստանն ու ցեղը, եւ կա՛մ պիտի ապահովէին անոնց բարեացակամութիւնը: Այս է հոն կրօնքին ներքին խորհուրդը, որ ազդեցութիւն մը չունի իրենց բարոյական կեանքին վրայ, քանի որ կրօնական զգացումը աստուածներու հանդէպ, ո՛չ սէր է եւ ոչ հիացում, այլ երկիւղ եւ շահախնդրութիւն: Այդ երկիւղն ալ ոչ թէ մեղքի մը գիտակցութենէն յառաջ կուգայ, այլ ոգիներու շարակամութենէն: Այս եղած է Աւստրալիոյ և Ամերիկայի բնիկներուն կրօնական աստիճանը եւ արիական ու սեմական ցեղերուն կրօնական առաջին խաւը:

Գալով քաղաքակրթութեան կրօնքներուն, Աւեստան բարոյական պայքարի մը ասպարէզ կը հանդիսացնէ աշխարհը, բարիին — լոյսին — կեանքին և չարին խաւարին — մահուան միջև, իբրեւ իրաց էութիւնէն բղձախող բան մը: Ըստ այսմ, լոյս — Աստուծոյ ըմբռնումը բնութեան հակադրութենէն վեր չի բարձրանար Զարդաշտականութեան մէջ: Միայն թէ բարի Աստուծոյն է վերջին յաղթանակը:

Քրմապետական հնադարեան կրօնքներուն մէջ՝ բարոյականը շատ կորսուած է բնական փիլիսոփայութեան խորը: Սեմական զգայասիրութիւնը (sensualité) կրօնական նուիրագործումով մը խամբեցուցած է բարոյականին ծաղիկը:

Սաքսօն և Նորմանական ցեղերու աստուածները՝ իբրեւ բարձր իտէալներ թէև հրապուրիչ են, բայց հոն ալ բարին յաղթական թափ մը չունի կեանքին իրաւարձութեանց մէջ:

Զարմանալի երեւոյթ մըն ալ՝ Պուտտայականութեան երեւումն է հնդկական հորիզոնին վրայ, ուր յուստեա փիլիսոփայութեան մը յատակին վրայ կը կազմակերպուի բարձր բարոյական մը, զոր միայն յետագայ քրիստոնէական տարրը շատ նուազ է հոն: Պուտտայական հաւատքը ոչ թէ սրտագին նուիրում մըն է առ Աստուած, բարի և յաւիտենական էակ մը, այլ անաստուածութեամբ կը փրկէ նա մարդը աշխարհէն, դոյութեան մեծ միջոցէն:

Այսու ամենայնիւ, Պղատոնի և Արիստոտէլի հայրենիքը ամէնէն ուշագրաւ պատկերը կը ներկայացնէ հին կրօնքներու համադրութեան մէջ: Ողիմպոսի աստուածային ակումբը հրաշակերտ անդրիններու պատկերաշար մըն է, որ գեղեցկադիտական ներդաշնակութեան յաղթանակը կը ցոլայ բնութեան բիրտ զօրութիւններու վրայ: Աստուածները հոն ալ սակայն անկարող են մօքուր արտայայտութիւնը ըլլալ կրօնական բարոյականի մը: Գեղեցկին արուեստը տկարացուցած էր ամէն բարոյական առաջգիմութիւն: Աստուածայինը գեղեցիկը կը հասցուէր հոն և ոչ թէ սրբարար ոգի մը, բարոյական վերահեղացումի ոյժ մը: Մանաւանդ թէ Հելլէններու մէջ լաւագոյն բարոյականը կրօնքէն դուրս և նոյնիսկ անոր ներհակ ուղղութեամբ զարգացած է: Պղատոնէն մինչև Մարկոս — Աւրելիոս, բարձր և հաստատուն բարոյական ուղի հոյակապ սերունդ մը կը բարգաւաճի՝ փիլիսոփայական գիծի մը վրայ:

Դարձեալ, ուշագիւր կ'ընեմ որ այն կրօնքներու մէջ, ուր խորհրդապաշտ միտքը (mysticisme) գեռ երեւցած չէր, Աստուծոյ դադափարը արդեամբ վերացական ծանօթութիւն մըն էր հոն: Հեռու, անազդեցիկ էակ մը, որ մարդը լքած է իր ձակատագրին, որ պարապ մը կը թողու սիրտերու մէջ, որ հզօր ձգողութիւն մը չունի հոգիներու վրայ, և որ չի ներշնչեր մարդը իր բոլոր գործերուն մէջ: Հոգեկան հազարակցութեան այդ պէտքէն չէ՛ր որ հելլէն արուեստին մէջ ընկուղուած կրօնքը՝ խորհուրդներու և օտար պաշտամանց մէջ փնտուց իր դոհացումը, քրիստոնէական թուականին մօտերը:

ԱՂԶԿԱՆ ՄԵ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

Կիրակի

Օրագիրս Բերայէն Գատըգիւղ՝ քու ձեռքդ հասցնելու համար, քիչ չէ որ կը մտածեմ, սիրելի Զարուհիս: Բայց ի՞նչ կուզես որ ընեմ, երբ կը գրես վերջին տոմսակովդ:—

«Սիրանոյս, փոխուա՛ծ ես բոլորովին, առջի բարեկամուհին չես: Կը կարծեմ որ օրէ օր նուազ կը սիրես զիս»:

Ինչո՞ւ այս կասկածները, աղուորս, երբ դքեղ ամբողջ ուժովս կը պաշտեմ, բանաստեղծին հետ ըսելու աստիճան... —բանաստեղծ չինեցի՜ Լեւոնը, միտքիս մէջ, երեւակայութեանս մէջ: Ի՞նչ անուն կրնաս տալ սատողերը դրողին:

«Գաղտնիքներու թանդարան մըն է սիրտս, դուն գաղտնիքներու ամէնէն նուիրականն ու սուրբն ես: Անունդ, քու դէմքիդ պէս, մետաքսէ փափկութեան մը մէջ պարուրած եմ: Կարծես կ'ատեմ աշխարհն ու մարդիկը, նոյնիսկ ինքզինքս, էութեանս մէջ երակաւորուող ամբողջ համակրութիւնն ու սէրը, ամբողջ պաշտումն ու տարփանքը քու վրադ միայն կեդրոնացնելու համար»:

«Անոր համար է որ առանց քեզի՝ տիեզերքը մեծ արհաւիրք մը կ'երեւայ աչքիս, և կեանքը՝ մեծ տաղտուկ մը: Զուարթութիւնը չեմ սիրեր, որպէս զի հրապոյրներուդ, թարմութիւններուդ բաւերուդ համակ, տըրտմութիւնը, համակ թաղծութիւնը ծծեմ: Պաշտելի գոյութեանդ անուշութիւններովդ հոգիս կը գինովցնեմ, հո՛գիս: Եւ յուշերուս մէջ ձայնդ Հայտնեան կրածչտութեան մը կը փոխուի, ու նայուածքդ Վինչիի նկարներուն»:

«Հաւատա՛ ըսածներուս, և մանաւանդ, եթէ կ'ուզես, հարցուր այն իրերուն զորս կը սիրեմ ես, ու կը սիրես դուն, հարցո՛ւր ամէնուն, թէ որքա՛ն կը պաշտեմ դքեղ: Ամէնքն ալ դոց ըրած են անունդ, այնքան կրկնած եմ զայն, առանձնութեանս կրաղացընոր դառնութիւններուն մէջ:

«Բայց մտածէ՛, սիրելի՛ս, բոլոր այս ա-

Սրդ, մարդկային պատմութեան մէջ, ինչպէս իրողութիւնները կը հաւաստեն, մեր կարծածին պէս պարզ և ուղիղ գիծով չեն ընթանար ո՛չ կրօնքն ու բարոյականը, ո՛չ քաղաքակրթութիւնն ու յառաջդիմութիւնը, դիտելով զանոնք երկրագունդին բոլոր սահմաններուն վրայ: Ամէն ցեղ և ժողովուրդ իր զարգացումին համեմատ ունեցած է բարիին ծանօթութիւնը, իր ընտանեկան և ընկերային յարաբերութեանց սովորոյթները, որոնց մէջ ի դուր կը փնտռեն կրօնքին ներշնչած բարոյականը իր արդի ճառագայթումով և բարձրութեամբ: Ինչպէս որ վաղընջական կրօններու տիեզերածնական (cosmogonique) քեօրինները այսօր գիտական արժէք մը չունին, այնպէս ալ հինաւուրց հաւատալիքներու աղբեցութեան ներքեւ կամ ինքնաբերաբար չինուած բարքերը այսօրուան կրօնական բարոյականը չեն յիշեցներ:

Այս առթիւ միտքս կուգայ վայրենի ցեղի մը գերեզմանական մէկ խուժողութ հանդէսը: Զուամած և անգործ մեծ մայրը կը նստի փոսին եզերքը. բոլոր ներկաները՝ զաւակ, թոռ, աղջական, բարեկամ, վերջին հրաժեշտը կուտան անոր. յետոյ կը թաղեն պառակլինը: Կրօնական հասկացողութիւնները միշտ և ամենուրեք բարոյացուցիչ աղբեցութիւն մը ունեցած չեն մարդոց վրայ: Հրէութեան անկման շրջանը, քահանաներու, դպիրներու և փարիսեցիներու ձեւապաշտ մոլեռանդութիւնը չէ՞ն ցուցներ թէ իրենց բարոյականը զուգընթաց չէր իրենց կրօնական դադափարներուն:

Ուստի կ'եղբակացնեմ թէ՛ պատմական սխալ մըն է կրօնն ու բարոյականը գերազանցապէս գիրկընդխառն եւ զուգընթաց տեսնել առհասարակ բոլոր կրօններու մէջ:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

Որմաւ, 12 նոյեմբեր

ՍՏԱՏԱՆՔ Ն. Կ. Պէրպլեբանի 1904ի ժողովրդական Տարեցոյցը, հետաքրքրաշարժ ու պէսափառութեամբ լեցուն նիւթերով, արձակ և ոտանաւոր: Տասներորդ տարին է որ կանոնաւորապէս կը հրատարակուի այս Տարեցոյցը և տարակոյս չիկայ որ այս անգամ ալ պիտի դառնէ նոյն ընդունելութիւնը ու ծաւալումը:

ղապատանքն ու խելայեղումները անգիտակից զառանցանքներ, միամիտ ցնորքներ, ցաւագին ունայնութիւններ պիտի ըլլային, եթէ վայրկեան մը, եթէ պահ մը տարակուսէի սիրոյդ վրայ... Ասկէ վերջը կըրո՞նաս նէ կասկածէ վրաս» :

ՆԵԿՈՇԱՐՔԻ

Կը տառապիմ : Կը տառապիմ առանց պատճառի :

Ըսած եմ քեզի արդէն, չէ՞ : Երակներուս մէջ տրտմութիւնն է որ կը քալէ արիւնի տեղ, ամէն վայրկեան լալու, հեւալու փորձութիւններ կ'ունենամ : Գիրքերէն խորշանք կը զգամ, կը պատուեմ օրագիրները, կը բարկանամ ընկերուհիներուս, չեմ գիտեր ո՛ւր պիտի յանգի աս վիճակս :

Ասիկա աղէկ բան մը չէ ապահովաբար. դո՛ւն ալ պիտի մեղքնաս ինծի հիմա, ձեռքս չէ, ի՛նչ ընեմ, ձեռքս չէ : Գիտեմ որ քու սիրտդ ալ կը ցաւցընեմ, կը դառնացնեմ իմ խոկումներովս, ցաւերովս, երազանքներովս :

Զարմանքդ իրաւացի է, երբ ամէն տեսնելուդ՝ զիս տարբեր կը գտնես, բոլորովին փոխուած : Ի՞նչ ընեմ, սիրական Զարուհի՛ս, չեմ ուզեր, բայց կ'ըլլայ... երեւակայէ՛ որ եթէ նոյնիսկ նախընտրութիւններս, անուրջներս, երգերս փոխուին՝ դուն նոյնը պիտի մնաս :

Բնաւորութիւնս թերեւս այլասերի տըրտմութեանս տուայտանքներուն մէջ, բայց զքեզ միշտ պիտի սիրեմ, ասոր վրայ չտարակուի՛ս երբեք :

ՆԵԿՈՇԱՐՔԻ

Vain rêve de verser une âme en une autre âme.

D'être unis comme l'eau se mêle avec le vin

Ou comme deux sarments se mêlent en la flamme...

Այո՛, իրաւ է, քանի որ մահը կայ :

Մեր ամէնէն բուն պաշտումին մէջ, յու՛մունքներու նախազուշակութեամբը, ասիկա յիշելու ենք, ասոր վրայ մոռածելու ենք, անով զբաղելու ենք միշտ :

Սուգը և ցաւը այնքան զօրաւոր չպիտի ըլլան այն ատեն :

Սիրոյ մէջ մահուան վրայ չենք խորհիր երբեք : Մի՛ մոռնար այս ոտանաւորը, որ այնքան սիրուն է իր պարզութեանը մէջ. սին երազ մը՝ հոգին ձուլել հոգիին, ինչպէս գինին կը խառնուի ջուրերու, ինչպէս երկու արգասներ ալ կաթագին, բոցին մէջը կը միանան իրարու :

ԶՈՒՅԲԱՐՔԻ

Օրագիրս է ասիկա, պէտք է որ մասնաւորաբար իմ անձիս, տպաւորութիւններուս պատմութիւնը ընեմ. եթէ ոչ՝ գրելիքներ շատ ունիմ քեզի, Զարուհի՛ս :

Դուն որ գրականութիւնով այնքան կը հետաքրքրուիս, և ամէն առիթով տեղեկութիւններ կը խնդրես ինէ, այս անգամ քիչ մը խօսիմ հիմակուան գրականութեան վրայ :

Իմ կարծիքներս են ասոնք, զորս քեզի գրելովս յանցանք մը գործած չեմ ըլլար հարկաւ հանրութեան առջև :

Իբրև լրագրութիւն, այսօրուան մեր գրողներուն արտագրութիւնը կարելի է որ դիտողութենէ զերծ նկատուի, վասնզի անիկա գրականութեան պէս կնճռոտ պահանջումներ և դժուարութիւններ չունի, և հետեւաբար նուազ քննադատելի է :

Տափակ, յեղեղուած, կեղծ ոտանաւորներ կը կարդանք ընդհանրապէս իբրև բանաստեղծութիւն : Դադափարի տէր բանաստեղծներ չունինք գրեթէ :

Կը զարմանամ թէ ինչ ճաշակի տէր մարդերու հանդիպեցանք. որոնք գրականութեան ինչ ըլլալը չեն գիտեր, քանի որ ո՛չ գիրք կարդացած են ու կը կարդան, ո՛չ ալ ընդհանուր գրական ուղղութիւններուն, խնդիրներուն կը հետեւին :

Ֆանթազիները՝ մէկ երկու անձերու քով միայն կը մշակուին : Դրական, իմաստասիրական ուսումնասիրութիւնները նոյնպէս : Ու ասոնք որ կարող են աղուոր նորալէսներ ստորագրելու, և սիրուն քերթուածներ արտադրելու, ասոնք ալ լռորովին քաշուած են հրապարակէն :

Դրականութիւնը պէտք է չփութել լրագրութեան հետ :

Հինգեաբբի

Ջրեղ սիրելիս ապացուցանելու համար, բան մը պիտի խնդրեմ քենէ, պիտի պաղատիմ որ ինծի ապրիլ սորվեցնես:

Երբեք ապրիլ չեմ գիտեր: Սեւեամբ տածումներս զիս թախծութեան աշխարհին մէջ կը նետեն, զիս կը չարչարեն. մութէն հաճոյք կը զգամ, մութը աղուոր կ'երեւայ աչքիս, այնքան տխուր եմ:

Բու վրադ մեծ հաւատք ունիմ, անո՛ր համար այս պաղատանքը:

Օրադրութիւնս նամակի պէս բան մը եղաւ, բայց ուղածս է, ասիկա կը սիրեմ, վասն զի կրնամ միաքէս անցածները գրել համարձակօրէն:

Հաւատա որ հիմա, սա մէկ քանի ամսուան մէջ այնքան տխուր եղած եմ՝ որքան զուարթ չեմ եղած բոլո՛ր կեանքիս մէջ:

Եւ ասոնք, այս տրտմութիւններն ու խորհրդածութիւնները քու աղնիւ և միեւնոյն ատեն անստգիւտ, եղական բարեկամութեանդ փոխանցելովս, միտքս զքեզ տագնապեցնել չէ, որպէսզի նուազ չարչարուիմ տրտմութիւնս երկուքի բաժնելով:

Հատոր մը պիտի կրնայի լեցնել կարծես ներքինս բացատրելու համար.

Կը տարակուսիմ բարեկամութեանս վրայ, փոխուած եմ...: Եթէ կուզես, նորէն հարցուր ասոնք, այն ատեն ուրիշ կերպով պիտի վարուիմ հետդ, գիտցած ըլլաս:

Ա՛խ, ապրի՛լ սորվեցուր ինծի:

Չեմ գիտեր, չեմ գիտեր:

Վրաս կասկածելու, փոփոխութիւններ նշմարելու տեղ, ինծի ըսէ թէ ինչպէ՛ս ապրելու է կին մը, երբ յուսահատ է ու տխուր: Վարձատրութիւնդ հոգիս պիտի ըլլայ, զոր պիտի փրկես:

Մի՛ մոռնար ըսածներս, և մանաւանդ, զիս տեսնելու եկած պահուդ, պատրաստուէ՛ պատասխանելու այն հարցումներուն զորս ըրի:

Սորվեցուր ինծի, ապրիլ սորվեցուր:

Եւ անկից ետքը, վստահ եղիր անկեղծութեանս, բարեկամութեանս և պաշտումիս վրայ:

ՄԱՌԻ ԵՌԱՅԱՆԵՍՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Մասիսի յաջորդ թիւով պիտի հրատարակենք Սպանիացի բանաստեղծ José Quintanar-ի Ովկէան նուանեալ քեթուածին գերաբար թարգմանութիւնը (յանդաւոր ոտանաւորով) զոր կատարած է ՏԻԳՐԱՆ ԵԼԻՔԻՆՃԵԱՆ:

Այս յիշատակութեան առթիւ պատեհութիւն կը գտնենք երկու բառ զրուցելու Պ. Դր. Մալխասի ծանօթ «Յետ—Գրութեան»ը մասին որուն մէջ, աչքի զարնող հակասութեամբ մը, կը յայտարարէ այս անգամ թէ «Մենասէրին գրածները զինքը բոլորովին անտարբեր կը թողուն» և թէ ինքը «կազմ և պատրաստ է զիմաւորելու իր ընդդիմախօսը, բաւական է որ անիկայ անձամբ ստանձնէ վէճին պատասխանատուութիւնը»: Այս տեսակ յայտարարութիւն մը թերեւս խուսափում չի նկատուէր՝ եթէ համարձակ կերպով մէջտեղ դրուէր առջի վայրկեանէն. մինչդեռ Պ. Մալխաս՝ Մենասէրի առաջին յօդուածը կարդալուն պէս (ուր արձանագրուած էին Տ. ԵԼՔԻՆՃԵԱՆԻ զիտողութիւնները) փութացեր էր երկար պատասխան մը գրել: Ուրեմն, անկեղծ չէ Պ. Մալխաս չորս չափաթեւքը յայտարարելով թէ Մենասէրին գրածները զինքը անտարբեր կը թողուն, և նոյնքան խախտու է իր յետամնաց առարկութիւնն ալ, թէ կ'ուզէ՝ վիճարանիլ բուն իսկ իր ընդդիմախօսին հետ—որ իրապէս ընդդիմախօս մը չէ, այլ Պ. Մալխասին գրական թեթեւ պաշարին վրայ արգահատող մը,— քանի որ օրը օրին երկուքին մէկանց փորձեց պատասխանել՝ բայց... չի յաջողեցաւ տպել տալ: Դարձեա՛լ, իր «Օ՛հ, ձեռնհասները...» վերնագրով յօդուածին մէջ,—որ լաւագոյն բաղդի մը արժանացաւ, այսինքն հրատարակուելու,— թափառեցաւ մեր գրաբարագէտ աշխատակցին ու «Մենասէր ծածկանունով քրօնիկագրին» զիտողութեանց շուրջը, այս վերջինէն ստանալով կէտը կէտին պատասխան մը՝ Մասիսի մէջ:

Դրական կամ լեզուարանական մենամար-

տերուն մէջ ալ, մէկը այսչափ առաջ երթալէն ետքը, է՛ն տաք ու վճռական վայրկեանին չի կրնար—առանց ոտնակոխ ընելու պատշաճութեան օրէնքները—ըսել իր դէմինին. «Պարո՛ն, դուն ե՛տ քաշուէ, ես վքեզ չեմ ճանչնար, թո՛ղ բուն շահ ունեցողը (°) անցնի քու տեղը»: Ուշ մտածուած առարկոթիւն մը պիտի նկատուէր ասիկայ դոր ընողը «պարտեալ» կամ «խոստափող» հոչակելու պիտի հարկադրուէին վկաները, —ներկայ պարագային մէջ՝ ընթերցող հասարակութիւնը: Եւ ընթերցող հասարակութիւնը թո՛ղ հաճի ինքը դատել, թէ խոստափումը ո՞ր կողմէ եղաւ այս պարզ բանավէճին մէջ զոր հոկէսեմբեր 9էն մինչեւ նոյեմբեր 14 ձգձգելու բաւական հարքներ գտաւ Պ. Մալխաս իր ձկուն զրիչովը: Եթէ այս է իր պարծենցած «ճշտականութիւնը իր ժամադրութեանց մէջ» եւ «ալխարհիկ կեանքի պատշաճութիւններուն համակերպիլ» դիտնալը, հախաւկը՝ ի՛նչ պիտի ըլլար արդեօք:

Եզրակացութիւն:—Այս բոլորէն կը հետեւի ու բացորոշ կը տեսնուի թէ, այսքան խօսքերէ ետքը, տակաւին մինչեւ այսօր անպատասխան կը մնան Մենասէրի կողմէ Պ. Մալխասի ուղղուած դիտողութիւնները եւ պատասխան դտնելիք ալ չունին: Կ'երեւայ թէ Պ. Մալխաս իրեն համար փառքի տիտղոս մը պիտի համարէր՝ դէթ Տիգրան Եւքէնճեանի նման հմուտ գրողէ մը կրել իր անխուսափելի տարտութիւնը, այս դրամարտին մէջ, մինչդեռ պարզ քրոնիկագրէ մը կրելուն մէջ պղտիկութիւն մը կը տեսնէ իրեն համար: Այս ալ մտածելու եղանակ մըն է որուն ըսելիք չունինք:

ՕՐՈՒԱՆ ՄԱՀԵՐԸ

Մէկ շաբթուան մէջ երեք մահեր միանգամայն արձանագրելու տխուր հարկին մէջ կը գտնուինք: ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ԲԷՅԻՉԵԱՆ, անգամ Աղեքսանդրիոյ Խառն Դատարանին, յանկարծամահ եղաւ այդ քաղաքին մէջ՝ խորին ցաւ պատճառելով ոչ միայն Եգիպտոս բընակ Հայերուն, այլ նաեւ ընկնեցուն ու

Եւրոպացիներուն որոնց քով ալ մեծ յարգանք ու համակրանք կը վայելէր: Պողոս փաշա Նուպար 100 անգլ. ոսկի նուիրեց աղքատներուն բաշխուելու համար հանգուցելոյն յիշատակին եւ 40 ոսկիի չափ նուիրատուութիւն մըն ալ եղաւ զանազաններու կողմէ՝ Աղեքսանդրիոյ Բարեգործական մարմնոյն, փոխան ծաղկեփունջի:—Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴ. ՔԱԶՈՒՆԻ, գիտուն Մխիթարեանը, հեղինակ բազմաթիւ երկասիրութեանց եւ Գիտական Բառարանի մը որ այս ամառ Կ. Պոլիս եկած էր՝ Վենետիկի Միաբանութեան կալուածական ու մատակարարական գործերուն համար, կարճատեւ հիւանդութենէ մը ետքը ի Տէր հանգեաւ, Մխիթարեան վարժարանին մէջ, Դատաբեկը:—ՄԱՏԱԹԻԱ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ, բազմարդիոն դրաքարագէտը, որ իր երկասիրութիւններովը այնքան գնահատելի ծառայութիւններ մատուցած է հայ լեւուին, մեռաւ Բանկալթիի Ս. Յակոբայ Անկեղանոցին մէջ ուր հիւանդ պառկած էր երկարատեւէ ի վեր:

Հ. Քաջունիի եւ Մ. Գարագաշեանի յուշարկաւորութիւնները կատարուեցան Բերայի Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ֆէնիքիս ԼՈՆՏՈՆԻ Հրդեհի Ապահովագրութեան անգլ. ծանօթ Ընկերութեան Թուրքիոյ ընդհանուր գործակալութիւնը, —ինչպէս կ'երեւայ Մասիսի ծանուցմանց կարգին մէջ հրատարակուած Շրջաբերականէն, — յանձնուած է Գր. Էֆ. Վարդանեանի որ արդէն անցած է իր այս պաշտօնին գլուխը, Դաւթիա, Վիթալիա խան: Վարդանեան Էֆ.՝ ապահովագրական գործերու երկարամեայ փորձառութեան կը միացնէ՝ պատուաւոր եւ ուղղամիտ գործակալի անուն մը, եւ այս կրկին հանգամանքներով տարակոյս չիկայ թէ նոր ղարկ մը պիտի տայ Ֆէնիքիսի արդէն իսկ ընդարձակ գործառնութիւններուն, ընդհանուր ղոհունակութիւն պատճառելով անոր հետ գործ ունեցողներուն:



ԲԱՍՔՈՒԱԼԱ ԻՎԱՆՕՎԻՉ

1.

(Pasquala Ivanovitch)

Գրեց. ԲԻԼԻ ԼՕԹԻ.

Թարգմ. ՉԻՅԹԻ-ՍԱՐԱՅ.

Ա.

Ն վեհ. Անգլիոյ Թագութիւնն նաւերէն՝ Լը
Թէմէրէրի վրայ:—Ծովածոց Քաթարօի
4 հոկտ:

Գիշերուան ժամը երկուքն է:—Կես գի-
տերէն մինչեւ ժամը չորսի պահակութեան,
սերտ ինքնամփոփումն ու խոր անդորրու-
թեան պահն է: Նաւորդական արհեստի մե-
լամաղձոտ վայրկեանն էր՝ ուր հսկումներու
խաղաղաւէտութեանը ու լայն լուծեան մը
մէջ, միաքղ., ամէն կապէ աղատ, սանձար-
ձակ, բարձրէն կը թեւածի, կեանքի ու աշ-
խարհային իրերու վրայ...

Քաթարօ ենք. երկիր նոր, անակնկալ
դիրք: Մասը կը կաղմենք եւրոպեան ցա-
ւախումբի մը՝ որուն նմանը գոյութիւն ու-
նեցած չէ երբեք:

Գիշերուան ժամը երկուքն է:—Ժամա-
նումին մեծածխոտ արարողութիւններուն,
տակնուվրայութիւններուն, թնդանթաձգու-
թիւններուն յաջորդած է ծաւալուն հանդար-
տութիւն մը:

Լուսինը կը լուսաւորէ հրաշալի ծովածո-
ցիկ մը ուր ջուրը անշարժ, կը նիրհէ. վար-
դադոյն շողշողումներ կ'ալձակէ մեծաբերձ
ապառաժներուն վրայ և ստուերակերպ կը
կտրատէ: ջուրերուն վերեւը կախուած չքե-
ղաշուք լեռներուն ձիգ կարկանդակները:

Գիշերով օդը դաղջ է և ցամաքէն՝ մըր-
տենի բուրումներ կը ծաւալին:—Անըջային
գիւղանկարներու մէջ ենք կարծես:

Բոլոր սա սև մարմինները որոնք ծովուն
հայելիին վրայ մրափող հրէշներու կը նմա-
նին, զրահապատ նաւեր են, եկած հոտ հա-
ւաքուած հապճեպով և որոնք՝ միջազգային
ցաւախումբը կը կաղմեն:

Զրահաւորները կը քնանան հիմա: Կէս
ժամը մէջ մը, երբ իրենց զանգակ-
ները կը հնչեն, կը լսուի նաև պահակ նա-

ւաստներուն քնաթաթախ աղաղակները՝ ո-
րոնք կը կրկնուին ամէն լեզուով և տարբեր
ձայնարկումներով: Յետոյ, կէս-քուն, կէս-
արթուն, քնաչրջիկի շեշտերով, երկարած-
գուող վերջին ձայնն ալ կը մարին ետեւէ
ետեւ, և ամէն բան նորէն կը վերադառնայ
բացարձակ ու խոր լուծեան գոգը:

Բ.

Երեքօրեքի, 5 հոկտեմբեր:—Այսօր հաղիւ
ժամանակ ունեցանք լուս աչքով տեսնալու,
մեզի համար նոր այս երկիրը ուր բազդը կը
նետէ մեզի և ուր՝ թերեւս երկար ատեն
հարկադրուած պիտի ըլլանք կենալու:

Սլաւներու այս երկիրը, յոյժ զարմանա-
քանչ երեւոյթ մը ունի: Լճակի մը պէս շըր-
ջափակուած ծովախորշին չորս բոլորը, լեռ-
ները կը բարձրանան հսկայ, սեպ, դափնի,
հեռուէն հեռու, անտառներու մէջ թառած
պղտիկ գիւղակներով:

Նւ ասոնց բոլորին ետեւ ու աւելի վեր,
մռայլամած բան մը կը կարկառի դէպ ի
երկինք, աշխարհապարփակ հակայական պա-
րիսպի մը պէս. Մօնթէնէկքօի սև սարակներն
են անոնք, քառսի մը պակուցիչ բեկորներուն
պէս, խանձած, մրկած, պատառ պատառ
եղած: Խռովատանջ գիրքերով, անշարժ կը
մնան անոնք օդին մէջ, հեռունէրը:

Մեր առջին, ծովուն եզրը, գեղ մը կը
փռուի. Պօղիչն է:

Քաթարօ հեռուն է, ծածկուած՝ լեռնե-
րուն ետին և խորը՝ ուրիշ ծովախորշի մը,
զոր չենք կրնար տեսնալ ասկէց:

Ենչ ընելու է այս երկիրին մէջ, թէ որ
ձմեռը հոս անցընելու պարտաւորութիւնք...

Դ.

Կիրակի, 10 հոկտեմբեր.—Արդէն իսկ ու-
թը օր է որ հոս ենք: Աչքերնիս քիչ քիչ կը
վարժուի, երկինքին երեսը անշարժացած

մնացած, քարի ահեղի այս դանդաղածներու տեսարանին. կ'ընտելանանք այդ անտառակներուն, այդ դիւղանկարներուն և աշխարհի այդ մանրադիտական անկիւնին դժնէ գիւմագծութեան:

Աշունը այս երկրին մէջ ջերմիկ է ու վճիտ. լեռներուն վրայ սփռուող բովանդակ այդ դալարիքը, հրաշալի գունագեղութիւն մը ունի:

Այսօր, հանգիստի օր է՝ առաւել մէջ: Նաւաղները՝ իրենց կտաւէ հագուստներուն մէջը մասմաքուր, տղու խաղեր կը խաղան, — և կամ թոյլ, անգործ, փորի վրայ կը տաւառածին նաւուն վերնայարկի զանազան մասերը, որոնք նոր կտրուած փայտի մը պէս ճերմակ են ու անաղտ:

Մէկ նաւէն միւսը, հետաքրքրուած, հեռադիտակներով զիրար կը գննեն: Արդարեւ, ամէնքս մէկ եղական նաւախումբ մը կը կազմենք հոտ. — քովերնիս Ծրանսացիները. — աւելի անդին, Աւստրիացիները. — ետքէն Ռուսերը, Ալմանները, Իտալացիները, — ամէնքն ալ առժամեայ բարեկամներ, քով քովի խաղաղութիւնով կը հանգչին, կապուտակ ջուրերուն վրայ:

Կիրակի է, — և իրաւ ալ կիրակիի վայելօք մը կ'ընէ. ոչ իսկ ամպի ծուէն մը երկինքին երեսը, ոչ իսկ թեթեւ փշում մը ծովուն վրայ: — Մեր շուրջը, արեւով թաթախուն հսկայ լեռները՝ լուռ, կը ցցուին:

Շրջակայ բոլոր դեղերէն, դեղացիներ են իջած, տեսնալու համար նորանշան այս նաւախումբը: Մօնթէնէկրօի ներսերէն և նոյն իսկ աւելի հեռուներէն եկածներ կան, զորս տանել բերելու չեն բաւեր Պօղիլի ձկնորսի նաւակները:

Մենք, Անգլիացիներս ենք որ, — մեր Ծրանսացի դրացիներուն հետ, — ամէնէն աւելի այցելութիւն կ'ընդունինք. աս մաքուր իրեր կարծես կը դգան որ միւսները աւելի ստորադաս են մենէ:

Նաւակները, լիփլեցուն, մէկ կողմէն կուգան. Տալմաթցիներ, — ոսկեճամուկ թաւիչով հագուած Մօնթէնէկրօցիներ, — և Ալպանացիներ զորս ակորժով ու համակ-

րանքով կ'ընդունին, ինչու որ Սթամպուլի աղուոր լեզուն կը խօսին ինծի հետ...

Իրիկուն ըլլալու վրայ է: Մօնթէնէկրօի քարէ խռովատանջ ծամածուռները՝ մութ կարմիր երանգներ կը հաղնին վերը, — վերջին խիստ մանիւշակագոյնի մը մէջ լուծուելու համար:

Յետոյ ամէն բան կը մարի, և օդին մէջ չերեւար ուրիշ բան բայց եթէ հեռաւոր ուրուանկարներ՝ որոնց խիզախ բարձրութիւնը անմբռնելի ու դարմանալի կը թուի մեզ: Մութը կոխած է և ես ցամաք կ'ելլամ: Կ'անցնիմ Պօղիլի դիւղական համախմբումին և սեւադէմ այն պանդոկին առջեւէն՝ ուր մակուկավարները կ'ընթերն: Արդէն ծանօթ ու սովորական արահետէ մը, լեռնաշղթային կողմը կ'ուղղուիմ: Մառերուն հոծ մթութեան մէջէն կ'ելլամ վեր, կ'ելլամ վեր և կանգ կ'առնեմ, մենաւոր հիւղակի մը մօտ, ձիթեհիներու ցանկափակի մը մէջ:

Հոն ինծի կըսպասէ մատաղատի աղջնակ մը՝ որ Հէրսէկօվիին կիներուն տարազը կը կրէ, այծերու ու ոչխարներու խեղճ պղտիկ պահապանուհի մը որ կուգայ քովս կը նստի, պղտիկ վայրենուհիի բովանդակ անմեղունակութիւնով ու մաքուր միտքով որոնց կը սիրեմ հաւատալ:

Տղայական բաներ կը պատմէ ինծի, սլաւ բառերու խառնուած խոսիւրէնով մը՝ զոր մեծ գոռարութիւնով կը հասկնամ, և ամէն իրիկուն վազելով կը հեռանայ քովէս երբ մօտակայ խրճիթէն, պառաւի դողդոջուն ձայն մը կը կանչէ զինքը. — «Բասքուալա, Բասքուալա...»:

Բասքուալա իվանովիչ հեղօրէն իր բնակարանը կը դառնայ, կը պառկի ցախէ իր խշտիլին վրայ և կը քնանայ:

Խեղճ պղտիկ, ոչինչ կըսպասեմ ես իրմէն, — ոչինչ բայց եթէ տեսնալ ու դիտել զինքը, ինչու որ աղուոր է, — ինչպէս կը դիտեմ բոլոր հազուադիւս այն ծաղիկները որոնք հոս անտառակներուն մէջ կը ծլին ու կը բողբոջին:

Առաջները կը վախչէր ինչ, ինչպէս կ'ը-

նեն բոլոր իրեն պէս աղջնակները : Հիմա , իր վախը փարպտած է և երեք օր կայ որ սերտ բարեկամներ եղած ենք իրարու :

Գ.

Բասքուլալ Իվանովիչ, — Իտալական անուն , Հիւսիսի մականուն : Ագրիականի անփերուն վրայ բնակող Սլաւները , Իտալացիներէն փոխ առած են անոնց լեզուին մէկ քանի բառերը և քիչ մըն ալ անոնց հնչումը , այլ մանաւանդ անոնց սաստիկ պղնձափայլ ու խիստ տաքարիւն դիմագոյնը :

Այդ փոքրիկ Բասքուլալին գորգոյն աչքերը ունին տարտամ միջպատ Հիւսիսը յիշեցնող այն չգիտեմ ինչը , որ իր ցեղին յատուկ է և որ կարգ մը ռուսական աչքերու հմայքը կը կազմէ : Բայց իր այտերը արեւէն ոսկեղծօժուած գոյն մը ունին , որ եղած դեղձերու տալանորութիւնը կը թողու , և իր կարի խարտեալ մաղերը աւելի բացգոյն կ'երեւան , իր քունքերուն թխացած գոյնին վրայ :

Իր հագուստը կը բաղկանայ , փոթփոթաւոր շապիկի մը վրայ բացուած , պղինձէ գանակներով չփակէ մը , և վտաւակէ մը՝ զոր մետաղէ դրուագներով ճարմանդուած կաշիէ կոշտ գօտի մը մէջքին վրայ կը բռնէ : Գլուխը կը դնէ կարմիր պեհէ մը՝ որուն ետեւի կողմէն երկար ճերմակ քօղ մը կը կախուի :

Բասքուլալ ծնած է , հեռուն , լեռներուն անդիլի կողմը , նսեմաստուերն Հերսեկօվինի մէջ . ոչ հայր , ոչ մայր ունի աս աշխարհիս վրայ և այն ծերուկ դեղալինները որոնց հետ կը բնակի ան , իր տէրերն են :

Ե.

Չորեքեաբթի 13 հոկտեմբեր : — Ռազմափորձ , զինուորական շարժումներ : Նաւաստուբեքու մէծ ռազմափորձերու բովանդակ տալիսուլրայութիւնը :

Չափէն աւելի ամպամած , մթաստուեր , ծանր օդ մը , և մրրկոտ թեթեւ անձրեւ մը : Ծովին վրայ լեռնացող , գորգոյն քարի հսկայական դէղերը չարաշուք երեւոյթներ մը առած են տխրադէմ երկինքին տակ : Ժամը հինգին գործերնիս լմնցած է : —

Աճապարանքով կը ճաշեմ եւ հագուստ կը փոխեմ , գիշերով , ձիթենիներու ցանկափակին մէջ երթալ գտնալու համար Բասքուլալ Իվանովիչն :

Բասքուլալ Իվանովիչ , նախ և առաջ երկար ատեն գլուխը ծունկերու վրայ դրած , կ'երկընայ մամուռներուն մէջ , քնանալ կեղծելով : Ձեռքիս տակ կը զգամ իր սիրտին ուժով բաբախելը և կը գուշակեմ որ չի քնանար կոր : Յած ձայնով ու խտալերէն լեզուով կը խօսիմ հետը և ան՝ կէս — քուն մէկու մը պէս , հատկապէս բաւեր վ , սլաւերէն կը պատասխանէ ինծի :

Բասքուլալ Իվանովիչ , մաներուն վրայ համբելով կը հասկնէ ինծի որ տամբընը տարեկան է . միտքէս կ'անցնէր արդէն որ այդչափ կայ , ինչու որ իր մարմինը արդէն իսկ կազմուած է . և սակայն , երբ խօսի , կարծես պզտիկ աղջնակի մը ձայնը ունի :

Հնձուած ու չորցած խոտի , գոմի , լեռնային ծոթորի (դաթրին) , — և քիչ մըն ալ , իր ոչխարներուն հոտը կուգայ վրայէն : Յօրեկին լուս աչքով , իր ճերմակ քօղին ու չփակին , ճաթուած գունատած և արահետներու հողէն աղտոտած ըլլալը երեւայ թերեւս . բայց գիշերը , բոլոր ատոնք աղուոր կ'երեւան ու այդ ամէնուն վրայէն խոտի ու դաշտավայրերու անուշ բոյրը կուգայ :

Երբ գլուխը կ'երեւցէ , պղինձէ զանակներու նուրը չթրտուքը կը լսուի , անարուեստ զարդարանքներու և գինդաքարով գնդասեղներու պատճառով որոնք՝ իր քօղը և կարմիր պեհէին չուխան իրար կը զօդեն :

Մէկէ աւելի արկածներ ունեցած ըլլալու է Պօղիլի հովիւներուն հետ , և տարակոյս չիկայ որ անձնատուր , արդէն իսկ դործածուած է իր տոչորուն , եռեւեհի մարմինը :

Պզտիկ տղու յատուկ միամտութիւններ ու լրբութիւններ ունի ան : Գերազանցապէս գեղեցիկ է ինք եւ իր ձեւը , կաղմը , հասակը անթերի են արձանի մը իրանին պէս :

Ախորժիլ է ձիթենիներու այս անտառաւոր : Գետինները , ամէն կողմ , չոր մամուռ , քարերու քոս ու գեղնած տերեւներ : Խաւար

գիշեր է. և սակայն կրգգաս որ բարձրագիր տեղ մըն ես ելած, և վերէն կ'իշխես ծովուն, — և եւրոպական նաւախումբին վրայ, ուրկէ, զլակներու եւ թմբուկներու հեռաւոր աղմուկներ, կոչնակի ձայներ, ռուսական նուագներ, աւստրիական սաղմոսերգութիւններ, անգլիական սրնգապարի եղանակներ, և նաւաղի ամէն լեզուէ երգերու փշուրներ կուգան: Եւ հեռուն այդ ամէնքը իրար կանցնին, կը թնձուկնան և դաշտավայրի բոլոր թռչուններու երգին կը խառնուին:

Ի՞նչ միապաղաղ խաղաղութիւն, այս անտառակին մթութեանը մէջ...: Կարծես բոլոր այն նաւերը դիտմամբ եկած հաւաքուած են հոտ, մեր ստորոտը, ծածկաբար մեզ հրամցնելու համար, տարտամ ու արտակարգ այդ նուագահանդէսը:

Ի՞նչ միապաղաղ խաղաղութիւն, այս անտառակին մթութեանը մէջ: Օդը պայծառացած է նորէն, և ձիթենիները, լուսաղարդ երկիրքին վրայ նրբաթել սև ժանեակի մը պէս կ'ուրուագեն իրենց փափկանօսը տերեւուտքը: Հողը աղուոր կը հոտի, թռչնակները կ'երգեն և Բասքուալա Իվանովիչի սիրտը միշտ աւելի ուժգին կը բաբախէ ձեռքի տակ...: Ինծի համար նոր են սլաւերէն այն բառերը՝ զորս ինք կը զուրցէ ինծի, և զորս հասնալու չեմ կարողանար տակաւին. այս երկիրն ալ նոր է ինծի համար և կըսկսիմ սիրել զայն, ինչպէս սիրած եմ արդէն շատ ուրիշ երկիրներ:

«—Բասքուալա՛, Բասքուալա՛», կը կանչէ օտար հնչումով մը, ամէն իրիկուան արբուտում ձայնը:

Բասքուալա ոտքի կ'ելլայ և կըսկսի վազել:

Իսկ ես, ծովեղերք կ'իջնամ նորէն:

Ք.

Ուրբաթ, 15 հոկտեմբեր:—Այսօր հով և անձրեւ: Աշնանային բուռն մրրիկներ: Արեւը, երբեմն երբեմն կ'երեայ, երկու տեղատարափի ընդմէջ:

Բասքուալա, որ հակառակ օդին, նորէն կը պտըտցնէ իր ոչխարները, ցոյց կուտայ ինծի լերան մէկ խորշիկը՝ ուր մրտենինները

և նռնենիները ծաղիկներով ծածկուած են, ինչպէս կ'ըլլայ գարունին, հեղեղատի մը խորը պատասպարուած, և աշնանալերջին ծաղկող պարտիզակ մըն է ան: Հոն, խոշոր քարերու տակ, հովուհիի թաքստոց մը գիտէ ինք: Հոն կը մտնանք, սպասելու համար որ տեղատարափները անցնին:

Բասքուալա մեծ եղբայր մը ունի զոր տեսած չէի տակաւին: Անակնկալ կերպով վրայ կը հասնի ան և կասկածոտ ու խոժոռ նայուածք մը կը ձգէ վրաս: Բասքուալաի տուած սլաւերէն մէկ բացատրութեան վրայ, զոր շատ պիտի ուղէի հասնալ, կը ժպտի ան և ձեռքը ինծի կ'երկարէ:

Տալմաթցի գեղացիի պէս հագուած է: Անունը ձօվանի է, և մակուկավար՝ ի Րիզանօ: Ծիշդ ու ձիշդ իր քրոջը դէմքը ունի, միեւնոյն խոշոր դորշգոյն աչքերը, պղնձանման դիմագոյնը և անոր պէս խարտեալ մաղեր,—իրեն ալ պեխերն են որ բացագոյն ու ցայտուն կը ցցուին իր այտերուն չէկ մորթին վրայ:

Ձօվանի Իվանովիչ կ'ընկերանայ ինծի մինչև ծովեղը: Չափազանց զարմացած կ'երևայ բանէ մը՝ որ սակայն սովորական դարձած է մեզի համար, այն է սպայի մը՝ իր մակոյկը նստիլը, սուլիչին ընծայած մեծաբանքները, ձեռքդ բռնելու, աւանդական գորգը փռելու համար խոճապող նաւաղները, եւլն: Կ'երեւայ թէ ատկէց կ'եղբաւ կացնէ որ, ես նշանաւոր մեծ մարդ մը, աւագ մեծաւոր մըն եմ:

Մօնթէնէկրօի լեռները, այդ գիշերուան չափ արտակարգօրէն գեղեցիկ եղած չէին երբեք: Մութ գոյն թուխ յատակի վրայ փոթորկայոյզ ամպեր, զորս վերջալոյսի արեւը շառագոյն կը շողշողացնէ,—աներեւակայելի շառագոյն մը, Պենկալեան հուրի բոսորագեղ կարմրութիւնով,—որոնք կը նմանին ատրաշէկ խարոյկներու, հրաշող բորբոքումներու, և որոնք հալելու, իրար կցուելու վրայ են դեռ կարծես:

(Շարունակելի)

Արսոմսկի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ


Տպագրութիւն ԱՐՇԵՆԵՐ Օրագրի

Սոյն հանրածանօթ չաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ քաթիսրոյի եւ թէ՛ իբրեւ չաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբան եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՃԻ ՍԱՐԻՄ Օսմ. չաքարագործը ճոխ միջերք մը ունի հարսանեկան չաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առաջին ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուններու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա, Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

23—30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ստանալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Gie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

- | | | |
|-------------------------------|---------|--|
| ՇԱՐԱՐԱԳՐԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ | ԲԵՐԱ. | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| | ԿՍԱՍԹԱ. | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| | ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| | ՍԵՆԻՏԱՐ | 2աբլը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք անի.

Կատարեալ երաւիաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդըլուի տունը:



ՌՕՍՒԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԳԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20-ի Կայս. Ուղարկուող արտոնուած .

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը :

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԳԵՆ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԵՄ. ցկեանս ապահովագրութիւն ՇՈՂԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՂԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՕՄ-ՐՈՆԵՐՈՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,666,667	Ֆրանք
Երաշխաւորութեան գումար աւելի քան	137,300,000	»

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա- գլուխ եւ վնասուց հատուցում	282,000,000	»
---	-------------	---

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուոս	54,000,000	»
--	------------	---

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա. — եւ Ղալաթիոյ Դործակալութեան, Էսկի Կէօրիւք խան, Բարափին վրայ:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԵՅՔՕԶ)

ՍՐՄԱՔԷՇԱՆՈՐԺԱՆԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրաժանօթ աղբիւրին ջուրը, ախորժահամ եւ վճիւր, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիւլու Արէսի տարրալուծած է զայն եւ թաշտէլէն ու Գանլըգաւաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չի տար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի աղբիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչերը ու տակառները հոն լեցուցելով ու զմոտեցնելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մանսիէ զատ, հետեւեալ բժիշկները.

Տօքթ. Տաքա Կաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուլի, Զէրրի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալլի, Միրապէլ, Բանայօթ պէյ, Պալիտիս, Բարաքովսքի, Բէլմով, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիգ Կաշա եւ Սիմօնֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ Բեմիս, Մեծ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7. — ՊՈԼԻՍ, Սիրքէհի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բարաքովսքի ջուր: Դիները շատ ատեն են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար չի՛ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի գործածէք զայն այսուհետեւ:

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ի

Յ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ և աւելի խնամով պատրաստուած և արդէն հրատարակուած է

Պարզ լարակազմ 3 դր. } 25 օրինակէն աւելի զնոդ-
Ընթերցող լարակազմ 5 » } նորուն զոնացուցիչ գեղջ
ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ 8 » }

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավանդանոցներու եւ քոյրա-վանդանոցներու փոխ: Հրատարակիչն է

Յ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Ե Ա Ն, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԿԱՐԱՊԵՏ. ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգմանած գիրքերէն հետեւեալները կը գտնուին Պաղատաբեան գրատունը եւ մայրաքաղաքիս միւս հայ գրավանդանոցներուն քով:

	հատոր	դր
Կարմիր մարդոց երդումը	2	10
Ընտանեզուրկ	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճերը	1	5
Սկզբունք Բաղ. Տանեսութեան	1	4
Ընտանեկան գաղտնիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ
Գտնում եւ վաճառում, ներածում և արտածում ի հաշիւ:

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ:

Յանձնառուողէք պիտի գնահատէ՛ յաճախորդը: Կրկնապատիկ կը տուժէ՝ ո՛ր եւ է յիշատ, որ արդիւնք ըլլայ դարձակալութեան անհոգութեանը: Հրապարակի մասին պահանջուած ծանօթութիւնք փութով կը դրկուին, եթէ 1 լրւ. նոց փութ ներփակուի: Յայտագիրը կը դրկուի պահանջողներուն: Դիմողը երբեք չի յիշատուիր. ընդհակառակը:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20, Զաքմաքմար, Կ. Պոլիս

Ամենամեծիս մթերք դպրոցական, գրական, գիտական եւ այլ գրեանք

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ/ ներկայ դպրոցական շրջանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած անհրաժեշտ դիւրութիւններ՝ գրեական ամէն յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաններով կատարելու, ըստ որում իբր գրավանդանոցական մեծ հաստատութիւն մը արտադրած է վերջին տասը տարիներու մէջ շարքով դպրոցական նորանոր դասագրքերու շարք մը եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներմուծած է մեր կրթական հին մեթոտներուն մէջ:

Ջերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գաւառաց կրթական վարիչ մարմինները՝ փութ թով յանձնարարել իրենց դասագրքերն, ի նկատ առնելով գրատոմս ընծայած առաւելութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳԻՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիեննա)

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԴՈՒՔՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ԸՆԴՈՒՄ ԵՐԿԵՆԻ (ի ԳԱՐԹԱՇԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Տոլային ապահովագր. ԸՆԿ. (ի ձԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քոնստի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԸՆԴՈՒՄ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսին դէմ

ԳԵ. ԵԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11½

ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11½

Երբակի օրերը ժամադրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Ձաճմանքով ԲԻԼ 64

ԸՆԹԱՑԻ ԸՆԹԵՐՑԻ.— ԴՊՐՈՑԻԳԻՐՔԻ,

Հրատարակուեցաւ Տարր. ԸՆԹ. Բ. տարին, ճոխ պատկերներով ու բազմապէս նիւթերով հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դր. Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ 1ը ձրի կը ստանան, 50 փարայ բոսթի ծախք զրկելով. Ուղղակի Դրատան դիմողներուն կարելո՞ր գեղչ մը տրուի:

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը որ սպառուել վրայ է, միմիայն յիշեալ գրասունքը կը գտնուի, ուր դիմելու են պէտք ունեցողները.— գին 80 դր:

Ամեն վճարում կանխիկ է:

9—10

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՖԵՆԻՔՍ ԼՈՒՆՏՈՒՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ, 15/28 նոյ. 1903

Տ... Ղալաթիա, Վիքայիս խան

Պ Պ. Ն. Մուսն եւ ընկ. դադարած ըլ-

լալով Ֆէնիքս Լիւթիլա ապահովագրական ընկերութեան գործակալութենէն, պատիւ սւնիւմ ծանուցանել ձեզի թէ լիազօր ընդհանուր գործակալ անուանուեցայ նոյն ընկերութեան թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ դաւաճաններու համար, արտօնուած ըլլալով նոյն ընկերութեան կողմէ ապահովագրութիւններ կնքելու հրդեհի դէմ յանուն նոյն ընկերութեան, եւ տեղւոյն վրայ կարգադրելու եւ վճարելու հրդեհէ առաջ եկած վնասները:

Նոյն ընկերութեան երկար ատենէ ի վեր ունեցած վստահելի եւ ամուր դիրքը, եւ իմ իբր 20 տարուան փորձառութիւնս ապահովագրական գործերու մէջ, երախտաւորութիւններ են թէ լաւ կերպով պիտի մատակարարեմ այն շահերը որոնք ինծի պիտի յանձնուին յարգելի յաճախորդներուն եւ ընդհանուր հասարակութեան կողմէ:

Ապաստելով ձեր հրամաններուն, կը խնդրեմ որ հաճիք ընդունել Տիար, իմ ամենախորին յարգանացս հաւատարմութեամբ:

Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ